«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 1194-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի «Արտաբյուջետային բանկային հաշիվ բացելու մասին» N 1194-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) որոշման 2-րդ կետում «առուվաճառքի պայմանագրի գնի վճարումներ (տնտեսագիտական դասակարգման կապիտալի ձեռքբերման գծով վճարումներ)» բառերից հետո ավելացնել «իսկ գումարի մնացորդն ուղղել վարչության աշխատակազմի կողմից զբաղեցվող տարածքների հիմնանորոգման ծախսերի իրականացմանը» բառերը: